2021, № 3, 55-60 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.3.055

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՖՐԻԿՅԱՆ ՆԱԽԿԻՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեծ տերությունների աճող ուշադրությունը օգտակար հանածոներով հարուստ աֆրիկյան տարածաշրջանի նկատմամբ պատճառ դարձավ, որ աֆրիկյան մայրցամաքը դառնա շահերի բախման և մրցակցության առարկա: Այս համատեքստում տարածաշրջանի մի շարք հատվածներում, այդ թվում՝ նախկին ֆրանսիական գաղութներում, պայքար ծավալվեց ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Չինաստանի միջև: Աֆրիկայում միջազգային խոշոր խաղացողների քաղաքական շահերի համապատկերում Ֆրանսիան միակողմանի քաղաքականությունից անցել է բազմակողմ քաղաքականության, որում առավել նկատելի են ԵՄ ստեղծման հետևանքները:

Բանալի բառեր - *Ֆրանսիա, աֆրիկյան նախկին գաղութներ, մեծ տերություններ, ԽՍՀՄ, ԱՄՆ, Չինաստան, ԵՄ, բազմակողմ դիվանագիտություն*

Ապագաղութացման ժամանակաշրջանից ի վեր, այլ աշխարհամասերի համեմատ, Աֆրիկա մայրցամաքն ավելի նվազ էր ընդգրկված գլոբալացման գործընթացներում: Սակայն մեծ տերությունների ուշադրության աճը հանքանյութերով հարուստ և մեծ պոտենցիալ ունեցող տարածաշրջանի նկատմամբ պատճառ դարձավ, որ աֆրիկյան մայրցամաքը վերածվի շահերի բախման և մրցակցության առարկայի: Այդ համատեքստում տարածաշրջանի մի շարք հատվածներում, այդ թվում ֆրանսիական նախկին գաղութներում, պայքար ծավալվեց ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Չինաստանի միջև, որոնց 1990-ական թթ. վերջերից միացան նաև այլ պետություններ, ինչպես Հնդկաստանը, Թուրքիան, Պարսից ծոցի որոշ երկրներ:

ԽՍՀՄ-ը լուրջ հակակշիռ էր այլ խաղացողների համար, քանզի ակնհայտ էր՝ վերջինս հեշտությամբ չէր ընդունի տարածաշրջանում որևէ այլ պետության գերակայություն: ԱՄՆ-ի և Չինաստանի նկրտումներին զուգահեռ՝ ԽՍՀՄ-ի հետաքրքրությունները տարածաշրջանում չէին սահմանափակվում միայն բնական հարուստ ռեսուրսներով. նավթ, ուրան, ոսկի և այլն. վերջինիս համար առանցքային էր տարածաշրջանում սոցիալիզմի տարածումը: Ճիշտ է՝ ԽՍՀՄ-ի «առարկայական» միջամտությունը մայրցամաքի հակամարտություններին սկսվեց ֆրանսիական գաղութ չհանդիսացող Անգոլայի 1975 թ. քաղաքացիական պատերազմին ներգրավմամբ, այդուհանդերձ դա լուրջ ազդակ էր Ֆրանսիայի համար ԽՍՀՄ-ի հետագա ծավալման մտավախության

տեսանկյունից: Սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը պաշտպանում էր իր շահերը ոչ միայն սոցիալիստական ճամբարի երկրներում, այլև հեռավոր Աֆրիկայում: «Աֆրիկյան հատուկ նշանակության ուժերը» ուղարկելով այնտեղ՝ իրագործում էր աշխարհաքաղաքական նպատակներ: Ըստ այդմ՝ Անգոլան դիտվում էր որպես Աֆրիկայում սոցիալիզմի հենակետ, որի նկատմամբ հավակնություններ ուներ նաև ԱՄՆ-ն: Չնայած առկա առևտրային բաղադրիչին (Անգոլան արտահանում էր փայտանյութ, նավթ և ադամանդ), ԽՍՀՄ-ի համար առաջնային էր գաղափարական քողի տակ մղվող քաղաքական ազդեցության համար պատերազմը: Այս հանգամանքը անհետևանք չմնաց Ֆրանսիայի համար: ԽՍՀՄ-ը Անգոլայից հետո ամրապնդեց իր դիրքերն Աֆրիկայում, իսկ հետո ֆրանսիական նախկին գաղութներ Գվինեայում և Թունիսում՝ ստեղծելով այնտեղ ռազմակայաններ:

ԽՍՀՄ քաղաքական շահերի իրականացմանը լուրջ հակակշիռ էր ԱՄՆ-ն, որոշ տեղերում նաև՝ Չինաստանը, քանի որ Աֆրիկայի շատ պետություններ, որպես հակաիմպերիալիստական պայքարի դաշնակիցներ՝ 1960-70 թթ. սկսեցին համագործակցել Չինաստանի հետ: 1990-ական թվականների կեսերից, սակայն, այդ առնչությունների գլխավոր շեշտը տեղափոխվեց Չինաստանի և Աֆրիկայի տնտեսական համագործակցության վրա. վառ օրինակներից է այն, որ 1996 թ. Չինաստանի նախագահ Ցզյան Ցզեմինը երեք շրջագայություն կատարեց Աֆրիկայի 18 պետություններում. արդյունքում մշակվեց Աֆրիկայի երկրների հետ համագործակցության պլան, որը շուտով սկսեց եռանդագին կենսագործվել[1]: Այս տարածաշրջանում Վաշինգտոնի և Պեկինի շահերը խաչաձևվում են՝ չին-ամերիկյան հարաբերություններին հաղորդելով մրցակցության երանգներ: Աֆրիկյան ուղղությամբ ԱՄՆ-ի և Չինաստանի 1990-ական թթ. քաղաքականության ակտիվացման հիմքում ընկած էին այս երկրների տնտեսական շահերը, ի մասնավորի՝ աֆրիկյան էներգետիկ և հանքային ռեսուրսների նկատմամբ անարգել և հուսալի մուտք ունենալը: Նկատելի էր նաև Չինաստանի աճող հետաքրքրությունն աֆրիկյան շուկայի նկատմամբ չինական արտադրանքի վաճառքի տեսանկյունից: Պեկինի և Վաշինգտոնի ներգրավվածությունը աֆրիկյան մայրցամաքի գործերում և իրենց տարածաշրջանային ներկայությունն ամրապնդելու վերջիններիս ձգտումը պայմանավորված էր ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական գործոններով: Աֆրիկայի պետություններն ԱՄՆ-ի և Չինաստանի համար հետաքրքրություն են ներկայացնում իբրև միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում բավական լայն ներկայացուցչություն ունեցող երկրներ: Օրինակ՝ ՄԱԿ-ում աֆրիկյան պետությունների բաժինը կազմում է ձայների ¼-ը, ինչը կարող է որոշիչ ազդեցություն ունենալ քաղաքական և տնտեսական կարևոր որոշումներ ընդունելիս: Աֆրիկայի նկատմամբ Չինաստանի ուշադրությունը

[1] Տե՛ս Ministry of Foreign affairs of the People's Republic of China, China-Africa Relations, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/ziliao_665539/3602_665543/3604_665547/t18059.shtml

բացատրվում է նաև համաշխարհային ասպարեզում այդ տարածաշրջանի աճող քաղաքական կշռով[2]:

Հանուն ճշմարտության պետք է նկատել, որ չինական քաղաքականության մեջ ամեն ինչ չէ, որ ձեռնտու է աֆրիկացիներին: Այսպես՝ Չինաստանի ներկայությունը տարածաշրջանում տագնապեցրել էր աֆրիկացիներին: Որպես սպառնալիք է ընկալվում չինական ապրանքների հեղեղը: Աֆրիկացիները դժգոհ են նաև այն բանից, որ մասնագետների մեծ մասը բերվում է Չինաստանից:

Այսպիսի խոշոր ուժային կենտրոնների ներգրավվածությունը Աֆրիկայում սահմանափակում է Ֆրանսիայի միակողմանի գործողությունների հնարավորությունները. նույնիսկ ռազմական միջամտությունները Ֆրանսիայի համար խնդիր էին, ուստի իր ազդեցությունը պահելու համար վերջինս դիմում է բազմակողմ դիվանագիտության՝ օգտագործելով Աֆրիկյան միության և ՄԱԿ-ի ներուժը: Եվ ակնհայտ է, որ տնտեսական այս ժամանակաշրջանում, երբ Չինաստանը իր ուրույն դերն ունի, միևնույն ժամանակ ԱՄՆ-ի շահագրգռվածությունն է մեծանում տարածաշրջանում, Ֆրանսիան դառնում է ավելի քիչ մրցունակ, քան այդ պետությունները, ուստի դիմում է փափուկ ուժի մեխանիզմին և այն լայնորեն առաջ տանում՝ ԵՄ քողի տակ հանդես գալով:

Ֆրանսիայի առաջնորդները ԵՄ ստեղծումից հետո սկսեցին իրենց քաղաքական կուրսը ներդաշնակեցնել ԵՄ նպատակներին և շահերին՝ փորձելով մեծապես ներգրավվել ԵՄ քաղաքականության մեջ, քանզի մտածում էին, որ դա շահաբաժիններ կտա Ֆրանսիային իր արտաքին քաղաքականության ոլորտում: ԵՄ գործընկերները մեծ ազդեցություն ունեին Ֆրանսիայի քաղաքականության վրա և հակառակը: Հարկ է նշել, որ աֆրիկյան նախկին գաղութներում Ֆրանսիայի ազդեցության թուլացումը, պայմանավորված տարածաշրջանում այլ խաղացողների ակտիվացմամբ, Ֆրանսիան «արդարացնում էր» ԵՄ ստեղծումից հետո իր արտաքին քաղաքական բնագավառում նոր արժեքների և սկզբունքների ներդրմամբ: Սակայն այն տեսակետը, թե նախքան ԵՄ ստեղծումը Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը ավելի իրատեսական էր, իսկ դրանից հետո այն դարձավ ազատական և հռետորական, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, քանի որ և՛ Եվրոպայում, և՛ Աֆրիկայում տեղի էին ունենում արմատական փոփոխություններ, որոնք սահմանափակում էին Ֆրանսիայի հնարավորությունները՝ վարելու ֆրանսակենտրոն իրատեսական, ուժի կիրառումից չխուսափող քաղաքականություն: Այս ամենը պարզ երևում է Աֆրիկայում Ֆրանսիայի վարած քաղաքականությունից, քանզի նախկինում այլ ակտիվ խաղացողների կողմից քիչ ուշադրության արժանացած շրջաններում վարելով իրատեսական քաղաքականություն՝ Ֆրանսիան այն համապատասխանեցնում էր իր շահերին: Սակայն Աֆրի-

[2] Տե՛ս նույն տեղը:

կայում ազգային-ազատագրական շարժումները սպառնալիք էին դիտվում Ֆրանսիայի տնտեսական, քաղաքական շահերին, միևնույն ժամանակ ԱՄՆ-ն ուժեղացրել էր իր դիրքերն Աֆրիկայում, ինչն էլ Ֆրանսիային ստիպեց փոխել իր քաղաքականությունը Աֆրիկայում՝ ԱՄՆ-ին հակակշռելու համար, սակայն այն ԵՄ շահերի հետ համատեղելը հեշտ չէր[3]: Ուստի ֆրանս-աֆրիկյան հարաբերությունները կառուցվածքային առումով չփոխվեցին, բայց բազմաթիվ նոր սկզբունքներ որդեգրվեցին, որոնցով էլ մեծապես կարևորվեց ԵՄ դերը: ԵՄ համակարգված քաղաքականության շահերից ելնելով՝ Ֆրանսիան որդեգրեց այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ խաղաղությունը, անվտանգությունը, կայունությունը, ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, որոնք «փափուկ ուժի» տարածման համար կարևոր հիմքեր էին ստեղծում: Այս սկզբունքները կարևորվեցին նաև ֆրանս-աֆրիկյան գագաթնաժողովի ժամանակ, երբ Ֆրանսիան ընդունեց Լա Բոլ (La Baule) դոկտրինը,[4] ինչը պաշտպանեց Աֆրիկայում ազատական և ժողովրդավարական կարգերի հաստատումը: Դոկտրինի համաձայն՝ Ֆրանսիան կրճատելու էր իր ներկայությունն Աֆրիկայում և՛ տնտեսական և՛ քաղաքական ոլորտներում: Այնուամենայնիվ, դոկտրինը ենթատեքստում պաշտպանում էր ավտորիտար վարչակարգը[5]:

ԵՄ ստեղծումից հետո քաղաքական իրադրությունը Ֆրանսիային տարավ դեպի բազմակողմ քաղաքականության, մանավանդ որ միակողմանի քաղաքականությունը արդեն հասցրել էր գցել Ֆրանսիայի հեղինակությունն Աֆրիկայում: Բազմակողմ քաղաքականությունը Ֆրանսիայի համար էական հնարավորություններ էր ստեղծում[6]: Վերջինս չդադարեցրեց ներխուժումները Աֆրիկա, քանի որ ուներ տնտեսական, քաղաքական, մշակութային հետաքրքրություն այնտեղ, ինչպես նաև ռազմավարական շահեր, և խորն էին Ֆրանսիայի ու Աֆրիկայի առաջնորդների կապերը: Ֆրանսիան իր ռազմական ներխուժումները Աֆրիկա ներկայացնում էր միջազգային կազմակերպությունների քողի ներքո: ԵՄ-ն իր քաղաքականության հիմքում դրել էր ահաբեկչության դեմ պայքարը, և Ֆրանսիան, այն դարձնելով խաղաքարտ, որպես անվտանգության երաշխավոր փորձում էր

---

[3] Տե՛ս **Olsen, G. R**. Challenges to the Traditional Policy Options, Opportunities for New Choices: The African Policy of the EU, The Round Table, 375, July 2004, էջ 425-436:

[4] Ֆրանսիական Բոլ քաղաքում 1990 թ. հունիսի 20-ին Ֆրանսուա Միտերանի ելույթը հայտնի է որպես Լա Բոլ դոկտրին: Ներկա էին աֆրիկյան 37 պետությունների առաջնորդներ: «Չկա զարգացում առանց ժողովրդավարության և չկա ժողովրդավարություն առաց զարգացման…», «…Ֆրանսիան չի պարտադրի Սահմանադրական օրենքի մոդել, այլ Աֆրիկայի ժողովուրդն ինքը կընտրի իր կառավարման ուղին՝ հիմնված համընդհանուր արժեքների վրա, այն է՝ ժողովրդավարություն» (Cf. Politique étrangère de la France, Nov-Dec 1991, էջ 48):

[5] Տե՛ս **Martin, G.,** 2000. France's African Policy in Transition: Disengagement and Redeployment. Illinois: University of Illinois, էջ 13:

[6] Տե՛ս **Chasles, J.M.,** 2011. Nicolas Sarkozy's African Policy in the Context of Franco-Chadian Relations. Dynamiques Internationales, Vol. 4, էջ 4:

միջամտել աֆրիկյան իր նախկին գաղութների ներքին գործերին՝ այսպիսով իրականացնելով սեփական նպատակները՝ 1. միջազգային ասպարեզում պահել իր երբեմնի բարձր դիրքը, որը խարխլվեց, երբ դադարեց մեծ գաղութատեր պետություն լինելուց, 2. պահպանել իր ստրատեգիական ռեսուրսները, 3. պահպանել իր հսկայական շահույթները, որոնք ստանում էր մենաշնորհային կարգավիճակի շնորհիվ մի շարք նախկին աֆրիկյան գաղութների[7]:

ԵՄ ստեղծումից հետո Ֆրանսիան պարտավորվեց մշակել «Նոր անվտանգության քաղաքականություն», որը, ի թիվս այլ ուղղությունների, իրենից ենթադրում էր Աֆրիկայում ռազմական ներկայության կրճատում (1997-2002 թթ. ֆրանսիական զորքի թիվը 8.000-ից դարձավ 5.600՝ տեղակայված հինգ կենտրոններում. Աբուջան, Դաքար, Ջիբութի, Լիբրեվիլ և Նջամենա)[8]: Ֆրանսիայի ռազմական ներկայության կրճատումը հանգեցրեց տնտեսական և ֆինանսական աջակցության կրճատման (1995 թ. 42.1 միլիարդ դոլար, 1998 թ. 34.7 միլիարդ դոլար)[9] Կարելի է ենթադրել, որ Ֆրանսիան ցանկանում էր ամրապնդել Աֆրիկայի անվտանգության համակարգը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ԵՄ-ի միջոցով[10]:

Ֆրանս–աֆրիկյան քաղաքական հարաբերությունների վերաիմաստավորման հարցում չի կարելի անտեսել նաև Ֆրանսիայի նկատմամբ աֆրիկյան առաջնորդների վերաբերմունքի փոփոխության գործոնը, որոնք սկսեցին բողոքել Աֆրիկայում Ֆրանսիայի ներկայությունից: Մասնավորապես Ուգանդայի և Ռուանդայի առաջնորդները հայտարարեցին. «Մենք չենք ուզում, որ Աֆրիկայի ժողովրդավարությունը պայմանավորված լինի քաղաքական և տնտեսական շահերով: Մենք ուզում ենք, որ Աֆրիկայի ժողովրդավարական ձգտումներն ընկած լինեն ֆրանս-աֆրիկյան և եվրո-աֆրիկյան հարաբերությունների հիմքում»[11]:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ Ֆրանսիայի աֆրիկյան նախկին գաղութներն ընդգրկող տարածաշրջանը այլևս միայն նրա միանձնյա քաղաքականության կրողները չեն: Աֆրիկայում միջազգային խոշոր դերակատարների՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, այնուհետև Ռուսաստանի, Չինաստանի քաղաքական հետաքրքրությունների ֆոնին Ֆրանսիան միակողմանի քաղաքականությունից անցում կատարեց բազմակողմ քաղաքականության,

---

[7] Տե՛ս **Paulo Mateus António Wache** The European Union Foreign Policy towards Africa, Rhetoric and Reality: Mozambique, a Case Study, Date: 23 August 2010, էջ 22:

[8] Տե՛ս **Jean-Dominique Geslin,** "Quels gendarmes pour l'Afrique?" Jeune Afrique (15-21 June 1999), էջ 27-8, which notes that the Zambakro training center is financed by France to the tune of 15 million francs:

[9] Տե՛ս French National Assembly, Adevah-Poeuf Report, 1998, էջ 9, 23; **P. Marchesin**, "L'aide publique au développement en 1997," Observatoire permanent de la coopération française, Rapport 1997 (Paris: Karthala, 1997), էջ 17:

[10] Տե՛ս France Diplomatie, 2010. Africa-France Summit, Final Declaration, 1 June 2010. Available from: http://www.diplomatie.gouv.fr/en/IMG/pdf/2010_Africa-France_ Summit_Final_ Declaration-2.pdf (Accessed 30 May 2013):

[11] "Politique étrangère de la France", May August 1996, p. 89.

որում էական են ԵՄ-ի ստեղծման հետևանքները: Հարկավոր է հաշվի առնել նաև Ֆրանսիայի ներքին քաղաքական անհանգստություններն առ այն, որ անիմաստ է ամբողջ ռեսուրսներն ու ֆինանսները ծախսել արդեն ոչ հեռանկարային դարձած աֆրիկյան նախկին գաղութներում, եթե դրանք կարելի է ուղղել ԵՄ հարթակում նոր քաղաքական կուրսի մշակմանը և իրականացմանը: Ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում Ֆրանսիայի արտաքին քաղաքականության առջև ծառացավ մեկ այլ խնդիր՝ պահպանել ազդեցությունը տարածաշրջանում, իսկ Աֆրիկայում Ֆրանսիայի կողմից «կոշտ ուժի» (fr.puissance dure)[12] կիրառումը այդչափ ազդեցիկ խաղացողների ներկայությամբ, մեղմ ասած, անհնար էր, ուստի պարզ դարձավ, որ այդ ուժը այլընտրանք է պահանջում, որը կարող էր լինել «փափուկ ուժը»:

ЖАННА АРУТЮНЯН – ***Бывшие африканские колонии Франции в центре внимания великих держав.*** – Растущее внимание великих держав к богатому полезными ископаемыми африканскому региону с его потенциалами послужило причиной того, что африканский континент стал предметом конфликта интересов и конкуренции. В этом контексте в ряде частей региона, включая бывшие французские колонии, развернулась борьба между США, СССР, Китаем. На фоне политических интересов основных международных игроков в Африке Франция перешла от односторонней политики к многосторонней, в которой более заметны следы создания ЕС.

Ключевые слова: *Франция, бывшие африканские колонии, великие державы, СССР, США, Китай, ЕС, многосторонняя дипломатия*

ZHANNA HARUTYUNYAN – ***Former African Colonies of France in the Focus of Attention of the Great Powers.*** **–** The growing attention of the great powers to the mineral-rich African region with other potentials caused the African continent to become a subject of conflict of interest and competition. In this context, in a number of parts of the region, including the former French colonies, there was a struggle between the United States, the USSR, China. Against the background of the political interests of the major international players in Africa, France has moved from a unilateral policy to a multilateral one, in which the traces of the creation of the EU are more noticeable.

Key words: *France, the former African colonies, the great powers, the USSR, the USA, China, the EU, multilateral diplomacy*

[12] Ի տարբերություն «փափուկ ուժի», «կոշտ ուժը» (Hard power) ելնում է ուժ գործադրելու մեթոդաբանությունից: Շատ հաճախ «կոշտ ուժի» քաղաքականությունն ուղեկցվում է երկրի ռազմական կամ տնտեսական լծակների, պատժամիջոցների բանեցմամբ՝ բանկային հաշիվների, ակտիվների սառեցման միջոցով: Հաճախ դրանք կիրառվում են միասին: Մասնագիտական գրականությունում «կոշտ ուժը» սահմանվում է նաև որպես «ագրեսիվ ուժ»: Տե՛ս **Joseph S. Nye Jr.** Soft Power the Means to Success in World Politics, New York, 2004, էջ 9-11, https://www.academia.edu/ 28699788/Soft_Power_the_Means_to_Success_in_World_Politics__Joseph_S._Nye_Jr